«Ատելության խոսքը մեդիայում. թիրախում կանայք են» թեմայով

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի

հերթական հանդիպման ամփոփաթերթ

Ս.թ. դեկտեմբերի 2-ին կայացավ ԱԺ-ՔՀԿ համագործակցության բաց հարթակի հերթական հանդիպումը՝ «Ատելության խոսքը մեդիայում. թիրախում կանայք են» թեմայով:

Հանդիպման նպատակն էր ներկայացնել «Սեքսիզմը և բռնությունը հեռուստաթերթերում և օնլայն մեդիայում. որքանով է գենդերազգայուն հայաստանյան մեդիան». մեդիա մոնիթորինգի նախնական արդյունքները, քննարկել մեդիայում և առցանց հարթակում ատելության խոսքի դրսևորումների խնդիրը և հավաքագրել առաջարկներ, որոնք միտված են մեդիա հարթակներում ատելության խոսքի դեմ արդյունավետ պայքարին:

Հանդիպմանը մասնակցել են Ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների և մեդիա կառույցների պատասխանատուներ:

Հանդիպումը կազմակերպվել էր «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՀՀ Ազգային ժողովի, ՕքսԵՋԵն հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ, Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ:

1. **Հանդիպման առաջին հատվածում** մեդիա փորձագետ Սուրեն Դեհերյանը ներկայացրեց «Սեքսիզմը և բռնությունը հեռուստաթերթերում և առցանց մեդիայում. որքանով է գենդերային զգայուն հայաստանյան մեդիան» հետազոտության նախնական արդյունքները[1]:

Հետազոտության ընթացքում մոնիթորինգի էին ենթարկվել երեքական հեռուտալիք և օնլայն մեդիա: Հետազոտության նախնական արդյունքները ցույց են տվել, որ գենդերային թեմատիկայով նյութերը ընդհանուր լրահոսի ընդամենը 5%-ն են կազմում, ընդ որում գենդերային զգայուն նյութերի թիվը շատ ավելի քիչ է հեռուստաթերթերում, քան օնլայն մեդիայում: Հեռուստաթերթերի դիտարկման արդյունքներով հատկապես առանձնանում են

[1] Հետազոտությունն իրականացվել է «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԵՋԵն հիմնադրամի հետ համատեղ, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

հեռուստասերիալները, որտեղ ոչ միայն իսպառ բացակայում է գենդերային զգայուն մոտեցումը և վերարտադրվում են կանանց նսեմացնող կարծրատիպերը, այլ աղավաղված արժեհամակարգով են ներկայացվում ընտանիքի մոդելը, ընտանեկան հարաբերությունները, կնոջ կերպարը: Բացի այդ հետազոտության հեղինակները վտանգ են տեսնում սերիալներում վիրավորանքի/հայհոյանքի հաճախակի օգտագործման մեջ՝ մատնանշելով, ու դա հանգեցնում է քրեական աշխարհի էլեմենտներով համեմված, աղավաղված շփման մշակույթի ձևավորմանը:

Հետազոտության նախնական արդյունքների պրեզենտացիան ստորև.

Media Monitoring.pptx

---

2. **Մեդիայում և առցանց հարթակում ատելության խոսքի**, սեքսիզմի, խտրականության դրսևորումների մասին քննարկման ընթացքում հարթակի մասնակիցների կողմից հնչեցվեցին մի շարք առաջարկներ՝ ուղղված ոլորտի բարելավմանը.

Օրենսդրական և քաղաքական բնույթի կարգավորումներ.

- Քննարկել առցանց լրատվամիջոցներում օգտատերերի կողմից արված վիրավորական մեկնաբանությունների դեմ պայքարելու հնարավորությունները՝ ի նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումները [1] և հիմք ընդունելով Եվրոպական դատարանի «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» գործով նախադեպային որոշումը, ըստ որի լրատվամիջոցը պետք է պատասխանատվություն կրի իր էլեկտրոնային կայքում տեղ գտած՝ վիրավորանք պարունակող մեկնաբանության համար և ծանուցման դեպքում պարտավոր է այն հեռացնել:
- Մշակել գործուն մեխանիզմներ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի կիրարկումը սեքսիզմի և կանանց նկատմամբ խտրականության դրսևորումների դեմ պայքարում ապահովելու համար: Մասնավորապես, օրենքը գործուն փաստաթուղթ դարձնելու համար հնարավոր է այն հարստացնել ենթաօրենսդրական ակտերով:
- Բացառել խոսքի ազատության և մեդիա ազատության հետ կապված հնարավոր վտանգները ՀՀ կառավարության կողմից մշակվող ատելության խոսքը քրեականացնող օրենսդրական նախաձեռնության շրջանակում:
- Ներքին համաձայնությունների մեխանիզմներ կիրառել քաղաքական դաշտում ատելության խոսքը կանխարգելելու նպատակով (օրինակ ընտրություններից առաջ #ՈՉատելության_խոսքին կարգախոսի ներքո քաղաքական ուժերի միջև համաձայնության ձեռքբերում և համապատասխան փաստաթղթի/հայտարարության ստորագրում):

- Դիտարկել որպես հիմք Եվրոպայի խորհրդի #ՈՉ իմ պառլամենտում նախաձեռնությունը և ԵԽԽՎ-ի կողմից ընդունված 2275 (2019 բանաձևը[2] ատելության խոսքի և սեքիզմի դեմ գործողություններում և նախաձեռնություններում:
- Պահանջել ԶԼՄ-երի իրական սեփականատերերի ու ֆինանսավորողների բացահայտումը և հրապարակայնացումը՝ ատելության խոսքի և կեղծ լուրերի տարածման դեմ պայքարում: Սահմանել պատվիրված նյութերի հատուկ նշման մասին պահանջը:

Լրատվական դաշտի կարգավորումներ

- Կազմակերպել սեմինարներ լրագրողների համար և հատուկ աշխատանք իրականցնել հատկապես խմբագիրների, սցենարիստների, մեդիա ղեկավարների հետ, ովքեր և որոշում են տվյալ մեդիա հարթակի բովանդակությունը:
- Աջակցել թեմային առնչվող մասնագիտական ուղեցույցների հրապարակմանը ԶԼՄ ներկայացուցիչների համար:
- Ապահովել թեմային առնչվող միջազգային փաստաթղթերի հայերեն որակյալ թարգմանություններ և հասանելի դարձնել դրանք ԶԼՄ ներկայացուցիչներին:
- Ուսումասիրել և տարածել ատելության խոսքի և սեքսիզմի դեմ պայքարի միջազգային փորձը:
- Խրախուսել ինքնակարգավորման նախաձեռնությունները, համագործակցել ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմի հետ՝ էթիկայի վարքականոններում լրացումներ, մշակումներ կատարելու նպատակով (մասնավորապես, առաջարկել ԶԼՄ-ներին ամրագրել իրենց էթիկայի կանոնակարգերում գենդերային խտրականությունը և սեքսիզմը բացառող դրույթներ):
- Սահմանել ենթաօրենսդրական կարգավորումների միջոցով թեմային առնչվող եզրույթները հեռուստաթերթերի համար («սարսափ», «էրոտիկ բնույթի հաղորդումներ», «բռնություն» և այլն):

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հետ կապված կարգավորումներ

- Կիրառել օրենսդիր մարմնի վերահսկողական գործառույթը ՀՌԱՀ-ի նկատմամբ՝ պարզաբանումներ պահանջելով հեռուստաթերթերում առկա խտրականության, բռնության, սեքսիզմի, ատելության խոսքի դրսևորումների հետ կապված:

Իրավապաշտպան գործունեության հետ կապված առաջարկներ

- Օրենսդրորեն սահմանել «իրավապաշտպան գործունեություն» եզրույթը՝ դատարան դիմելու դեպքում իրավապաշտպանների գործունեության հետ կապված հայցերի ձևակերպման դժվարություններից խուսափելու նպատակով:
- Աջակցել կին իրավապաշտպանների և ակտիվիստների նկատմամբ խտրականության և ատելության խոսքի դեպքերով համապարփակ, անկողմնակալ և արդյունավետ

[2] PACE Resolution 2275 (2019), The role and responsibilities of political leaders in combating hate speech and intolerance http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-DocDetails-EN.asp?FileID=27636&lang=EN

քննության իրականացմանը՝ դրանով իսկ վերացնելով նրանց հանդեպ աճող ատելության խոսքի և սպառնալիքների անպատժելիության մթնոլորտը:

- Համապարփակ վիճակագրություն վարել կին իրավապաշտպանների և ակտիվիստների նկատմամբ տարածվող ատելության խոսքի առնչությամբ, ինչպես նաև հավաքագրել տեղեկատվություն հարուցված գործերի և դրանց ընթացքի վերաբերյալ:
- Իրականացնել հանրային արշավ՝ բարձրացնելու կին իրավապաշտպանների և ակտիվիստների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:
- Հանդես գալ կին իրավապաշտպանների հանդեպ տարածվող ատելության խոսքի հրապարակային դատապարտմամբ՝ նման դեպքերի արձանագրման դեպքում:
- Հետազոտություն իրականացնել՝ «կարծիք ձևավորողների», սոցիալական հարթակներում մեծ հետևորդներ ունեցող անձանց հայտարարություններում առկա
- Սեքսիզմի, բռնություն և ատելության խոսք պարունակող որակավորումների ուսումնասիրության նպատակով:

<u>Քննարկման արդյունքում համաձայնեցված հետագա քայլերը.</u>

- Աշխատանքային խումբ ձևավորել վերոնշյալ հիմնահարցերի հետ կապված Ազգային ժողովում՝ ՔՀԿ-ների ներկայացուցիչների ներգրավմամբ:
- Շրջանառել մեդիա մոնիթորինգի զեկույցի վերջնական տարբերակը, որը կներառի նաև որակական հետազոտության արդյունքները և ոլորտը բարելավելուն ուղղված առաջարկները:
- Նախաձեռնել մյուս տարվա հունվարին ևս մեկ քննարկում այս թեմայով, հրավիրելով քննարկմանը ԱԺ պատգամավոր Վահագն Թևոսյանին, ով այժմ ուսումնասիրում է ԶԼՄ օրենսդրական կարգավորումների միջազգային փորձը և գլխավորելու է վերոնշյալ հիմնահարցերի հետ կապված աշխատանքները Ազգային ժողովում: